## Տ. ՋԱՎԵՆ ՔԱՀԱՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆ

(ավազանի անունը՝ Արմեն)

Ծնվել է 1972 թ. մայիսի 28-ին, Թեհրանում:

1989 թ. ավարտել է Էջմիածնի Միկոյանի անվան միջնակարգ դպրոցը:

1990-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Զ լսարանը:

1991 թ., Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Ներսես Շնորհալու «Քառասնորդական պահոց կիրակիների օրհնությունները»» թեմայով:

1997 թ. նոյեմբեր ամսից ծառայության է գործուղվել Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոց իբրև փոխտեսուչ:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: